


ԾԱՂԻԿ շարաթը երկու անգամ կը հրատարակուի Զորեքշարթի եւ Շարաթ օրերն : — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 400 դրուշ արծաթ : — Վեցամսեայն 50 . — Գաւառաց համար 115 դրուշ . — Վեցամսեայ 60 . — Ծանուցման տողը 5 դրուշ :

ԽՄԲԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ



Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել :

Առ Արտօնատեր և Տնօրէն
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ
Էսկի Զապիկէ Ճատտէ
Նշան էՖ. Պերպէրեանի Տպարանն :

Խմբագրութեան յանձնուած գրութիւնք ետ չեն տրուիր :

ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ

40 ՓԱՐԱ

Հ Ա Ն Դ Է Ս

ՓԱՐԱ 40

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ազգային տեսութիւն (նոր բարերարութիւն և կտակ — Հին և նոր քահանայք . — Գրական . — Օգտակար խրատք . — Գրական զբօսանք . — Ասկէ անկէ . — Նոնա . — Լրագրաց սուտը . — Այլ և այլք . — Կանանց ժողով . — Տիւրի բանդալուն (վիպասանութիւն) . Ծանուցմունք :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆՈՐ ԲԱՐԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՏԱԿ

Նախորդ թուով յայտնեցինք պարունակութիւնը Վսեմ Զունդ Ասպետի կտակին, ոյր արամազրութիւն Ազգին մէկ յոյժ կարեւոր պէտքը կը ընուխօսինք այժմ նորա մեծ կարեւորութեանը վրայ :

Բարձրագոյն կրթութեան պէտքն յոյժ զգալի է նկատմամբ այն ուշիմ պատանեկաց՝ որ իւրեանց բնածիր հանճարն ու տանջանքը փայլեցնելու յարմարութիւն և ընդունակութիւն ունին, սակայն միջոցը և դիւրութիւն կը պակսին մանաւանդ անոնց համար՝ որ ազբատիկ են :

Անշուշտ իրաւունք և արդարութիւն է որ ուշիմ և փայլուն ապագայ խոտացող ազբատիկ տղայք զրկուին բարձրագոյն կրթութեան բարիքէ . զի նորա կրնան օր մը Ազգին պարծանաց և մխիթարութեան առիթ դառնալ, բայց ո՞վ պիտի հոգայ և խնամէ ազբատիկ տղայոց այդ մեծագոյն պէտքը :

Հարեւանցի տեսութեամբ պիտի ըսուի թէ պարտի Ազգն հոգալ և խրնամել, բայց մարդ երբ գործնական մտօք խորհի, իսկոյն պիտի համոզուի թէ Ազգն անկարօ՞ղ է զայդ թան ընել և շատ բարեբաղդ պէտք է համարինք զմեզ, եթէ գէթ կարող թաղերու վարժարանք — որպէս է Մայր-եկեղեցւոյ թաղն — բարեկարգուին և արդիւնաւոր փիճակի մէջ գրուին :

Յուսահատութիւն պատճառելու համար չէ որ կը գրենք . այլ զգացընելու համար թէ արդի դրութիւնն յոյժ անբաւական է, որ ո՞րչափ տատեն տեւէ, հանրութիւնը չօգտիր, բայց մասնաւորք կ'օգտին ներհանրութեան զոհողութիւններէն և բարեպաշտից գանձանակը ձգած լուսաներէն :

Այս բանի հետեւութիւնն այն եղած է զի Ազգին դրամովը կը քաջալերուին կարգ մ'անձինք, յորս հրատարակութիւն, արժանիք և կարողութիւն բացակայութեամբ կը փայլին և կը տուժէ սակայն ազգային մանկան, որ իսկ ապագայ է :

Ո՞վ պիտի բուժէ զայս վէրք և ո՞վ կոտորէ այն միքրօպներ, որ ազգային սիրտը կը կրծեն, կ'ապականեն և բարոյական մահ կը պատճառեն :

— Յայտնի է թէ Սահմանադրութիւնն, յորում է սակայն պակասաւոր դրութիւնը, չզի Սահմանադրութիւնը թաղ խորհրդոց կը յանձնէ իւրա-

քանչիւր թաղի ներքին գործոց վարչութիւնը և եկեղեցեաց ու վարժարանաց մատակարարութիւնը՝ առանց երբէք գործնական պատասխանատուութեան, և ահա պակասութիւնն և տգեղութիւնը յայդմ է, վասն զի ամեն բան գրեթէ թաղ խորհրդոց խղճին ու կամեցողութեան յանձնուած է :

Այսպիսի դրութենէ ի հարկէ հիմնական բարւոքմունք և տեւական բարեկարգութիւն չսպասուիր, և եթէ մերթ քնդ մերթ մխիթարական դէպքեր ստուպի նման երևին, ատոնք առժամանակեայ բացառութիւններ են միայն :

Փակելով աստ սոյն միջադէպը, ոյր վրայ առանձին յօդուածով պիտի խօսինք, դառնանք մեր բուն նիւթին, այն է . ի՞նչ ընեն այն ուշիմ և բարձրագոյն կրթութեան յարմարութիւն, ընդունակութիւն և արամազրութիւն ունեցող ազբատիկ տղաքներն, որք օժտեալ են ի բնութենէ և որք սակայն իրենք ձիրքերն ու կարողութիւնները փայլեցնելու համար միջոցներու, օգնութեան կը կարօտին :

Այդ օգնութիւնն ընձեռել մեծատանց գէթ բարոյական պարտաւորութիւնն է, վասն զի Աստուած տուած է իրեն հարստութիւն ոչ թէ միայն իրենց հաճոյիցը գոհացում տալու, այլ մանաւանդ թէ բարերարելու մարդկութեան և այն ազգին՝ ում ինքեանք

կը վերաբերին, ինչպէս կը բարերարէ Աստուած, որ աղբիւրն է բարութեան:

Հարստութիւնն աւանդ մ'է ուրեմն, զոր կուտայ Աստուած մխիթարելու համար զանոնք՝ որ արժանի են հոգածութեան և մխիթարանաց, և երանի՛ այն մեծատանց՝ որ զհարստութիւնը կը նկատեն իբր գործիք բարերարութեան:

Բայց Աստուած եթէ տուած է մեծատանց հարստութիւն, մեղի ալ տըված է երախտագիտութիւն:

Եթէ մեծատուններէ կ'ակնկալենք բարերարութիւն Ազգին համար, փութանք հատուցանել նաեւ պարտիքն երախտագիտութեան առ այն արժանաւորս, որ կը բարերարեն:

Այս պարտիք նաեւ միջոց է աւելցնելու թիւն Ազգային Բարերարաց, և մենք այս տեսակէտով է որ ստէպ կը քարոզենք սա սկզբունք թէ՛ «սիրենք, յարգենք ու պատուենք այն ոչ-անտարբեր Հայ-Մեծատուններն Ազգին համար, Եկեղեցիին համար և աղքատին համար:

Վսեմ Ասպետն Ջունդ իւր կտակաւն—որ տրամադրութեամբ աղքատիկ ուշիմ պատանիներ ընտրանօք Եւրոպա պիտի զրկուին բարձրագոյն կըրթութիւնն ստանալու համար—կը հոգայ այդ մեծագոյն պէտք է մաս մը՝ անմահացնելով իր անունն և յիշատակը իւր ողբացեալ Տիկնոջ և գեղեցիկ օրինակ ընծայելով նաեւ այլոց, վասն զի բնաւ կարելի չէ որ մենք Եւրոպայի մէջ կարենանք կրթական բարձրագոյն հաստատութիւն մը պահպանել կամ հոս հիմնել, բայց կրնանք Եւրոպա տղաքներ զրկել:

Եւ ահա կտակ կոչուած բանը կարեւոր միջոց մ'է, որ կը ծառայէ մեծ գեր կատարելու վերաբերմամբ մեր ազգային բազմաթիւ կենսական պիտոյից:

Մեր համազգի Հայ-Հոովմէական հասարակութիւնն և Յոյն ազգը մեծապէս կ'օգտին կտակներէ, մինչդեռ մեր մէջ այդ բանին պէտք եղած կերպով հոգ տարուած և մանաւանդ ամուրի գիւրակեաց ազգայնոց քով լուրջ ջանքեր եղած չեն:

Կտակաց հաստատութեան պարտուպատշաճ կերպով հոգ և խնամք տանին յոյժ կենսական պէտք և պէտ-

քէ աւելի պարտաւորութիւն մ'է, յորում մեր եկեղեցական դասն կրնայ մեծ դեր կատարել, բայց ամեն բանէ առաջ հարկ է վստահութիւն ներշնչել, որպէս զի կտակելու յօժարութիւն և տրամադրութիւն ունեցող անձինք ապահով լինին իւրեանց կտակի խղճամիտ և ճշդիւ կիրառութեանը:

Արդ, Ամեն Ս. Պատրիարք Հայրն որ կ'զգայ զայս ամենայն և բարեյօժար տրամադրութեամբք օժտեալ է, կը յուսանք թէ ազգային հարստութեան գլխաւոր ազբիւրն եղող այս ճիւղի մասին լուրջ հոգածութիւն ցոյց կուտայ յօգուտ և ի բարգաւաճումն բազմակարօտ Հայ-Ազգին:

Հին Եի ՆՈՐ ՔԱՀԱՆՈՅ

Արեւել օրագրի մէջ կարդացինք հետեւեւ «սոյն» աղբիւր վերնագրով երկար յօդուած մը Հրանդ սարգսրութեամբ, որ աղքատիկ պանպուխտ կնոջ մը կեանքէն ցաւագին յիշատակ մը նկարագրած էր: «Նունուֆար, իւր երկու զաւկները թաղելէ ետքը, էրիկն ալ Պալըքը կը տանի. և այս անգամ անկարող կըլլայ թաղման պարտքը հատուցանել տէրտէրներու ուստի իբրեւ վերջին միջոց, մուրացկանութեան կը դիմէ՝ ազատելու համար ինքզինքը հոգիս պարտէն և օձիքը տէրտէրներուն ձեռքէն:»

Արժ. քահանայ մը սոյն յօդուածին ի պատասխան Արեւելի մէջ նամակ մը կ'տայ, ցաւելով թէ՛ Հրանդ սոյն նկարագրութեամբ ընդհանուր քահանայից պատուոյն խնայած չէ:

Յաջորդ յօդուածով մը Հրանդ ի քնին կ'առնու Արժ. Հօր նամակն, կարգ մը իրողութիւններ կը պատմէ և խտիւ կը քննադատէ հին և նոր քահանայից արարքն: Սոյն յօդուածը ընթերցած միջոցնիս, մտքերնիս եկաւ ճշմարիտ իրողութիւն մը, որ շատերուն սրտին աղբած է, և ինչպէս կ'ըսէ Հրանդ, մեծ և հարուստ կոչուած թաղի մը մէջ կատարուած լինելուն անյայտ մնացած է:

Հարուստի մը ապարանքի մէջ գիշերային պահպանութիւն ընող գաւառացի մը՝ պատահարէ մը վախնալով հիւանդ անկողին կիյնայ, և երե-

սուն օրի չափ շարաշար տանջուելէ յետոյ. իւր կինն, նոյնպէս գաւառացի, տեսնելով որ ազատում չունի, եկեղեցի կերթայ և քահանայ մը կը խնդրէ հիւանդին այցելութեան համար: Ինչպէս որ այն թաղի Կար. քահանայներուն սովորութիւնն է, ականջ չեն կախեր, և խեղճ կինն գլխիկոր ետ կը դառնայ, բայց մի քանի օր եւս կանցնի, հիւանդն աւելի եւս կը ծանրանայ, գրեթէ հոգեւարք է. կինն ալ չի կրնար համբերել: Գաւառացիին արիւնը գլուխը կը ցատքէ: Կը հագուեցնէ էրիկն, և շալկելով մինչեւ եկեղեցի կը տանի: Հոն բոլոր ներկայք կը գայթակղին այս տեսարանին առջեւ, մանաւանդ կնոջ հայհոյութիւնն ու անէծքն իմանալով, Խեղճ հիւանդն վերստին շալկով տուն կը բերուի և իւր անձնուէր կնոջ քաջութեամբ սուրբ հաղորդութեան արժանանալով մի քիչ յետոյ կը վախճանի և կը զըրկուի ի գերեզման:

—Ձենք կարծեր որ սոյն իրողութեան համար ալ Արժ. Տէր Հայրը սուտ է ըսէ, հարիւրաւոր աչքեր տեսած և հարիւրաւոր ականջներ լսած են, և սոյն իրողութեան ներկայ եղող քահանայից ամենքն ալ ողջ են. կը խնդրենք Արժ. Հօրմէն, որ այսպիսի հին և նոր յիշատակներ քրքրելու չելնէ, քանզի շատ նպաստաւոր չենք տեսներ հետեւանքն թէ հին և թէ նոր քահանայից համար ալ միանգամայն, թէ և բացառութիւնք կենան, ՀՐԱՏ

ԳՐԿԱԱՆ

Քանի որ շոորթս լի բաժակիդ մէջ թացի

Եւ տմոյն ճակատս

Ձեռացդ մէջ պահ մ'հանգուցի

Քանի որ հոգուդ շունջէն,

Բոյրն անուշ ստուերաքող

Մերթ շնչեցի ես արդէն:

Քանի որ բերնէդ թռան

Այն բառերն հեշտաւոր

Թագուն սրտիդ այդ թարգման

Քանի որ լացդ, ժպիտդ տեսայ

Շրթունքդ շրթանցս

Եւ աչքերդ աչքերուս վրայ:

Մինչ օրերէդ բրցուած
 Վարդի տերեւ մը ինկաւ
 Յալիս պղտոր իմ կենաց
 Մինչ ճառագայթ մ'լուսաւոր
 Դէմքիս վրայ զմայլած
 Ինկաւ աստղէդ քողաւոր

Արագասահ տարիներ
 Որչափ ալ շուտ որ անցնիք,
 Ալ զիս չէ՛ք ծերացնէր.
 Ինչ են ձեր ծաղիկներ թարչամած
 Զի հողոյս մէջ ես ունիմ
 Ծաղիկ մը դեռ չը փթթած.
 Ձեր թեւեր թէեւ դարնեն,
 Կաթիլ մ'իսկ չեն թափեր
 Իմ լիւրի ամանէն,
 Զի հողոյս բոցը և սէր,
 Մոռացութիւն,
 Եւ ձեր մոխիր չեն մարեր.
 ՏՕԲ. Ս. ԱՐԱՊԵԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏԲ

Հանդերձերու նորոգում. — Հանդերձ-
 ները նորոգելու տարօրինակ եղանակ
 մը կայ որ ամենէն աւելի Անկլիոյ մէջ
 ի գործ կը դրուի: Երբ հանդերձնուդ
 մէկ մասը կը պատռի. պատռած տե-
 ղին հակառակ կողմը կտոր մը կը
 բերէ՛ք, երկու ծայրերը իրարու
 քով բերէ՛ք, և վրայէն տաք արդուկ
 մ'անցուցէք: Ժամանակի տեսակէտով
 այս եղանակը օգտակար և միանգա-
 մայն խնայողական է:

* * *

Վասակար Խորհրդ. — Պարտիզին
 կամ դաշտին վնասակար խոտերը ջրն-
 ջելու համար կեռացուցէ՛ք 120 լիտր
 ջուր օրոյ մէջ դրէ՛ք նաեւ 12 քիլօկ-
 րամ կիր, 2 քիլօկրամ փոշիացեալ ծը-
 ծուժ: Հեղանիւթը լաւ մը խառնե-
 ցէ՛ք և հանդարտ վիճակի մը մէջ թո-
 ղէ՛ք: Եռացեալ հեղանիւթիւն վրայ
 աւելցուցէ՛ք համաչափ քանակու-
 թեամբ ջուր և խառնուրդով պարտի-
 ղին կամ դաշտին վնասակար խոտերը
 ջրեցէ՛ք:

* * *

Ճարտի Բեթերը Ընկեր. — Եւրոպ. —
 Շատ անգամներ, մանաւանդ գիշեր
 ժամանակ, ճարտէն հոսած ճարպային
 կաթիլներն մեր հանդերձներուն վը-
 րայ սպիտակ բիծեր կը ցուցնեն:

Պարզ միջոց մը դանձը ջնջելու հա-
 մար. զմեւոյ մը միջոցաւ, ճարպը հա-
 նեցէ՛ք և ալքօօլով մաքրեցէ՛ք.

* * *

Նարնջե անուշիկ. — Նարնջին կեղեւ-
 ները հանեցէ՛ք, և ջրոյ մէջ եփեցէ՛ք,
 եթէ փայտի փոքրիկ ճիւղ մը դիւ-
 րութեամբ մտնէ նարնջի մէջ, յայտնի
 կը լինի թէ՛ նարնջն կարելի եղածին
 չափ եփուած է: Ուր ժամանակ կըր-
 նանք ուրիշ անուշեղէններու նման
 պատրաստել: Նարնջին շերտերն ա-
 ուէ՛ք և այդ օշարակին մէջ դրէ՛ք և
 քառօրդ ժամ մը եփեցէ՛ք:

* * *

Թառառու վնասիկ. — Երբ պարտիզին ծաղկանց սի-
 րահար էք և կը տեսնէք ձեր ամենէն
 սիրելի ծաղիկներն որք տակաւ առ-
 տակաւ կորսնցնելով իրենց գոյնն ու
 բոյրը կ'իկսին թառամիլ, կը խրատեմ
 ձեզ որ անմիջապէս եռացած ջրոյ մէջ
 դնէ՛ք զայնս ցողունին երկու երրորդ-
 մասը միայն ջրոյ մէջ մնալու պայմա-
 նաւ և վտառ եղիք թէ՛ նոքա իրենց
 նախկին երեւոյթն պիտի ստանան: Այ-
 նուհետեւ թրջուած մասը հանեցէ՛ք
 տաք ջրոյն մէջ և ապա՝ պազ ջրով լի
 ամանի մը մէջ դրէ՛ք:

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԶՐՕՍԱՆԲ

Ե Ր Կ Ա Յ Ն Բ Ա Ռ Ե Ր

Կը կարծենք թերեւս երբեմն որ
 մեր լեզուին մէջ կը գտնուին այնպի-
 սի բառեր, որք կը զարմացնեն մեզ
 իրենց երկայնութեամբ, այսինքն գի-
 րերու շարունակութեամբ. բայց երբ
 բազմատեղութեան դնեմք զայնս Գեր-
 մանական, Ուելլական (կալէս) և հին
 Յունական մի քանի բառերու հետ,
 շատ և շատ փոքր և կարճ պիտի գըւ-
 նեմք մեր երկայն կարծուած բառերն:

Տարի մը առաջ Գերման Զուլիցցե-
 րիացիք ոմանք Գաղիոյ մի գաւառին
 մէջ բնկերութիւն մը կազմած են ու-
 բուն անունն է «Վինթրթութուրըհանտ-
 վեպիսպուռչէնլօռվառթսկուր», ա-
 նուն մը զոր Գերմանացիք սոսկալի
 գտած են և պարզապէս կը կոչեն զայն
 «Փօռվառթս կուր»:

Կալէսի գաւառին մէջ գիւղակ մը
 կայ որոյ անունն է «Լանֆէյրբուրլ-
 կուինկիլօկէրբուրլիանտիլուրիկօ-
 կօ». թէեւ ընդհանրապէս կը կոչուի
 «Լանֆէյրբուրլկուինկիլ»:

Գերմանացիք կը պարծենան իրենց
 երկու երկայն բառերով որուն մին է
 (պատրաստուէ՛), «Կէսուրհայթսվի-
 տէռհէռսթէլունկսուսմընմիշուկսվէ-
 ոհայթիսքունտիկէս» իսկ միւսն է
 (քիչ մը յագնութիւն ա՛ւ) «Բօնսթան-
 թինօրիթանիչէստուարլսագորֆէս-
 կրքլչարթսվէռլինմախըր». (փա՛ռք քեզ,
 վերջապէս լմնցա՛ւ). հա՛, դեռ չլմնցաւ,
 մէկ հատ մ'եւս կայ, զոր հնչելու հա-
 մար շատ դժուարաւ թիւն և փռնք-
 տալ պէտք է, որ է.

«Եունկըռֆուսուրնցիմըռուռսվիմ.
 տաշութթօէտթունկսկէկէսօն»:

Բայց ամենէն սոսկալին Պղատոնի
 իւր գրութեանց միոյն մէջ դրամ բա-
 ուրն է որ գաղղիարէն գրերով 169ի
 կը հասնի և որ է, (Յառա՛ջ) «Լէքատօ-
 թէմախհօղէլախհօկալէօգուանիօլիլը-
 սանտուրիմըթուրիմաթօսիֆիօրաստ
 օմէլիթօքթաքէքլսւմէնօքիչէլըիքօսու
 ֆօֆաթթօթօթէրիսթէռալէքթուրնօթ
 թէկքէֆալօքիկքլօթէլօիլալուկուսիւէօ-
 պալէթուականօրլէռուկօն» (օխ՛ . . .
 . . . պղտիկ մը եւս և լմնցաւ, այս ալ
 յունական է. «Բօլիֆուասթիքսնթինօ-
 միմէկալօնսուլաթօն»:

Ուրեմն հիմա ալ պարծենանք որ
 երկայն բառեր ունինք մեր մէջը:
 ՍԻԼՍԾ ՄՈՒԿ

5 մարտ 1890
 Գատը-գիւղ

ԱՍԿԵ ԱՆԿԵ

Նշանաւո թեթեւօլիկ մը կու-
 ղայ խորհուրդ հարցնել փաստաբանի
 մը թէ արդեօ՞ք կրնայ ի դատ կոչել
 իւր ծնողքն:

— Ինչ բանի համար, կը հարցնէ
 փաստաբանը:
 — Իբր շուայլ . . . այժմ իսկ պարտ-
 քերս վճարեցին . . . տասն և հինգեր-
 րորդ անգամ ըլլալով:

* * *

Մարտիկացի վաճառական մը կը
 մեռնի միլիոններ շահելէն վերջը. որ

գործի սկսած էր 25 հազար ֆրանս. քով. իւր հարստութիւնը բարեկամի մը կը թողու պայմանաւ որ բարեկամը 25 հազար ֆրանս. դնէ դադազին մէջ: Ժառանգորդը սոյն սրբազան քր. մահաճոյքէն խուսափելու միջոց մը կը փնտռէ երկու օր, և փնտաւելէն վերջը, ճակտին կը զարնէ և կըսէ,

— Գտայ: դադազին մէջ չէք մը կը դնեմ, երբ ստակի պէտք ունենայ, չէքը կառնէ:

* * *

Ի Գործարան. — Նախագահը. — Վերջապէս չպիտի խոստովանիք թէ ինչ արեւտով կը պարագլիք:

Ամբաստանեալը. — Բայց, Պ. Նախագահ, ըսուելու արհեստ չէ որ...

* * *

— Մայրիկ, անգղիերէն հրահանգս ընելու համար քիչ մը օգնէ ինձ:

— Բայց, ես անգղիերէն չեմ գիտեր:

— Ո՛հ, ինչ սիրուն ծնողք ունիս եղեր:

* * *

Ինչո՞ւ համար մարդը որ ողջ ողջ կը կարէ ստակօտը, որ ողջ ողջ կը փետտէ հաւերը, ողջ ողջ օձաձկան ձորթը կը հանէ եփել և ուտելու համար, անգութ հը համարէ զվազը՝ որ բոլորովին հում կուտէ զմարդը առանց չարչարելու և նաեւ առանց ձորթը հանելու:

* * *

Ձեր. — Երկու Մարտիկացիք ժամանակաւ իրենց երկիրը ունեցած սատակ ջերմի վրայ կը խօսին,

— Ես կըսէ մին, չեմ գիտեր թէ ինչպէս ողջ մնացի մինչեւ ցայտօր, այնպիսի սատակ ջերմ մ'ունէի և այնպիսի սաքովութիւն մը որ բժիշկը բազմակերպս զննած ատեն կը վախնար սրձեռքը կայրի:

— Երեթէ իմինիս պէս, կըսէ միւսն.

— Ինչ բժիշկը քու բազմակերպ ալ բռնելու կը վախնար:

— Վախնայն ալ խօսք է, ունելով կը բռներ բազմակերպս:

* * *

Երկու բարեկամաց ձեւ — Եթէ աշխատիս ստակ կը շահիս: Ինչո՞ւ դործ մը չես փնտռեր. կրնաս տարին 1800 ֆրանս. շահի:

— Ինչ, 1800 ֆրանս. ըսիր. ես ան-

կէ աւելի կը շահիմ փոխ առնելով:

* * *

Ուրիշին. — Լէօն Ժ. Պապ. — Օր մը ոսկեփոխ մը կը գրէ առ Լէօն Ժ Պապին, ինդրելով ի նմանէ վարձատրութիւն մը ոսկի շինելու գաղտնիքը գտած ըլլալուն համար: Պապը կը խըրկէ նմա պարագայ մեծ քսակ մը ըսել տալով թէ, քանի որ ոսկի շինել գիտէ, զանոնք ամփոփելու համար քր. սակի մը պէտք ունի:

* * *

Սիւսիւ չօգ սեվէր շիք միւսիւնին պիրի պիր կէնճ գատընա արզը մուհապպէթ իթտիկի սըրատա,

— Սիղի ճանրմ կիպի սեվէրիմ. տէտիկինտէ գատըն պիր գահգահա իլէ կիւլէրէք:

— Վիճուաբմ կիպի սեվէրիմ, տէմիչ օլսայրտընըղ տահա կիւղէլ սէօլլէմիչ օլուրտընըղ. տէմիչ տիր:

* * *

Պիր զէվճ իլէ զէվճէ արասընտա.

Ձէվճ. — Հէր քէսին. չօճուդարընը կէօրի. յօրուժտա իմրէնիյօրուժ, պիւմէմ պիզիմ չօճուդար նէտէն պուգատար թէրպիյէսիզ օլույօրլար:

Ձէվճէ. — Էյ պու թէրպիյսիզիբըլէրի սէնտէն մի եօղսա պէնտէն մի ալըեօրլար. հէլէ պէնտէն ալմամըչ օլտըզլարընը էի պիլիբիմ,

— Վագաա էօլլէ սէնտէն ալմա եօրլար, զիրա շիմտիյէ գատար սէնտէքի թէրպիյսիզիբըլէրիսին հիչ պիբիսին էքսիլտիլինի կէօրմէտիմ:

* * *

Պիր չօղ վագըթլար թաչրատա պուլունմուչ պիր ատամ մէմլէքէթինէ ալտէթինտէ. խանէսինէ կիրէր կիրմէղ զէվճինին պօյնընտ սարըլարագ,

— Սհ, սեվկիլիլիւ զէվճէճիլիմ, քիմ պիլիլ պէնիմ իչին նէ գատար հասրէթ չէքմիչսին տիր:

— Հիչ սօրմալընըղ, օտամտան իչէրի պիր տէլիգանընըն կիրաիկինի կէօրտիլիմտէ սիզ կէլիօրսընըղ զաննըլա եիւրէլիմ օյնարտը:

— 333 —

Ն Ո Ն Ս.

Եւրոպական լրագրաց մէջ կը կարգանք թէ վերջին օրերս Աւստրիոյ Բրէսպուրկ քաղաքին շրջակայներն երկու հօգի՝ մին 50 տարեկան այր մը և միւսն 19 տարեկան աղջիկ մը ՆՈՆՍ կոչուած հիւանդութեան ենթակայ ըլլալով չորս օրուան միակերպ քունէ մը արթնցեր են եղեր շատ տկար վիճակի մէջ:

Ատոնք անչուշտ բարեբաղդ պէտք է համարուին որ վերջապէս արթնցեր են և կ'զգան տոժ իրենց տկարութիւնը, մինչդեռ Գուժ-գափուցին, որ արգէն երկար տարիներէ հետէ ենթակայ եղած է ոչ թէ նախի, այլ տեսակ մը վարակիչ ախտի, յորմէ փրկուելու համար իրեն հրամցուած ամեն մարդասիրական խնամք և դարման դրժբաղդարար չընդունիլ տեսակ մը միքրոպային ազդեցութեան ենթակայ գտնուելով՝ առանց երբէք ըմբռնելու սակայն թէ ս'ըպիսի կացութեան և վիճակի մէջ կը գտնուի:

Այս տեսակ հիւանդութեան ոչ բժիշկ խեր կ'ընէ և ոչ դեղ՝ այլ միայն Երկնից օգնութիւնը, զոր կը մաղթենք յոյժ կարեկցաբար:

ԼՐԱԳՐԱՑ ՍՈՒՏԸ

Կտուութիւնը, այսինքն, սուտ խօսիլը այս կամ այն մարդու կամ կարգ մը մարդոց յատուկ մտութիւն չէ, լըրագիրք ալ սուտ կը խօսին սա տարբերութեամբ միայն թէ սուտ խօսած ըլլալու համար չէ որ սուտ մը կը խօսին, այլ իրենք ստույթեան մը զոհ գացած ըլլալով է որ կը խօսին, թէ և ընթերցողը չգիտեր— և անչուշտ ալ պարտականութիւն չունի գիտնալու— թէ լըրագրին դրածը սո՞ւտ է թէ իրաւ, այլ կըսէ ինչի՞ս լրագիրն է որ բան մը առանց քննելու՝ ամենայն դիւրահաւանութեամբ կը հաւատայ, կը գրէ և պարզմտութեամբ իր հաւատացած սուտը մեզի ստակով կը ծախէ:

Իսկ լրագիրն ալ կըսէ՝ ես լրագիր եմ. իմ պաշտօնս է լսածս գրել, բայց սուտ է եղեր իմ պարտքս չէ քննել, վասն զի եթէ քննեմ, ժամանակ կանցնի. լուրը կը հիննայ և անուս պալթի կեղտ, որ մեծ անպատու:

ութիւն է, ուստի լաւագոյն է որ իմ լուրերէս մէկ քանին սուտ ելլան, քան թէ ես պայաթծի լրագիր կոչուիմ:

Ահաւասիկ խնդիր մը, յորում ընթերցողն ալ իրաւունք ունի, լրագիրն ալ իրաւունք ունի:

Ասոր վրայ չենք ուզեր երկարորէն վարդապետել. վասնզի եթէ ի նպաստ ընթերցողաց խօսինք, լրագրաց խաթրը կը մնայ, և եթէ ի նպաստ լրագրաց խօսինք, ընթերցողաց խաթրը կը մնայ, ուստի, մենք առանց բան մը բռնած ըլլալու՝ դրենք միայն թէ ՍՈՒՏ է Հազարը համար թագը կոչուողը. ծի մը կնոյ չորս մանչ և մէկ աղջիկ զաւակ մէկանց յաշխարհ բերած ըլլալու լուրը. զոր լրագիրք սմանք հըրատարակելու իշկիւզարութիւնը բրած էին, առանց քննելու սակայն թէ զուարճատէրի մը կատակին զո՞հ գացած են, աւելորդ է շտեղծի ի հարկէ վաճիւղ դիւրահաւանութեամբ մը:

Արդեօք լրագիրք ալ դիւրահաւանութիւն պէ՞տք է որ ունենան թէ չէ, խնդիր մ'է, որուն լուծումը կապասենք Արեւելեան Մամուլ օրաթերթէն, որ կարծեսք թէ ազրիլի պիտի հրատարակուի:

Համբերութիւն կը մաղթենք ընթերցողաց:

ՍՅԼ ԵՒ ՍՅԼԲ

Ինչպէս կին մը իւր ետեւէն ունենալով չէն Պէրնաուի շուն մը փողոցէ մը անցած ատեն՝ երկու երկտասարգաց կը պատահի. ասանցմէ մին կըսէ, «Ո՛հ, ինչ գեղեցիկ արագած»։ Կինը զայրանալով կը դառնայ խօսողին ու կը գոչէ՝ «Պարոն. ձեզի պէս սրկայներն են որ միշտ կանպատուեն մեր սեռը փողոցներու մէջ»։ «Բայց ատիկին, ներեցէք կը պատասխանէ պարոնը» «Ես ձեր շան կուզղէի իմ խօսքերս»:

* * *

Չնկմէ ունեցած 2000 ֆրանքի պահանջքիս վրայ այդչափ պնդելնիդ շատ զարմանալի է, դիտեալով որ միլիոնատէր մ'էք: «Բայց կարծեմ որ ժամանակն է որ վճարէք»:

«Լաւ, բայց ինչպէս ըսի նախապէս ինծի հարուստ կին մը գտէք, և դուք առաջին պիտի ըլլաք որուն պիտի վճարեմ»։ — «Հարուստ կին. շատ դիւրաւ կըսէք. ո՛ր է տեսեմ այդպիսի հարուստ կին մը»:

«Շատ պարզ է. . . . Չեր աղջիկը կնութեան տուէք ինձ»:

* * *

Պէնսիլի փողոցներուն մէջ խիստ պարզ հագուած անձ մը կը թափառէր աստ անդ ձեռքը ունենալով ծրար մը կնքեալ և վրան հասցէ մը գրուած, և մէկ անկիւնը մէջը 25 ըսթէրլին գտնուելը նշանակուած էր: Անցորդ մը, որ այն անձին տարակուսեալ վիճակը նշմարած էր, կը մօտենայ և կը հարցնէ թէ ինչ է իւր փրնտուածը. Փոխանակ պատասխանելու, թափառականը իւր ձեռքի ծրարը հետաքրքիրին աչքին մօտեցուց որ կարգաց հասցէն պատճառաբանելով թէ մոռցած էր ինք և կարգալ չգիտեր: Անցորդը յանկարծ շինծու ուրախութիւն մը ցուցնելով գոչեց. «Բայց պարոն, այս ծրարը ինձ համար է, արդէն բաւական ատենէ ի վեր այս ծրարին կապասէի», թափառականը խիստ դո՞հ թուելով թէ փնտուած անձը դատած էր և թէ պաշտօնը կատարած՝ ծրարը կը յանձնէ և Յ մարգի վարձք մը կը պահանջէ փոխարէն իւր ծառայութեանը՝ զոր կը զրպանէ մեծաւ շնորհակալութեամբ: Անցորդը (որուն բնաւ չէր վերաբերէր ծրարը) փողոցըն մէկ մութ անկիւնը կը քաշուի, ծրարիկը կը բանայ. . . . և ի մեծ զարմացումն կը գտնայ մէջէն թուղթ մը որուն վրայ մեծ գրերով գրուած է «Նետաքրքիր մի ըլլար»:

* * *

Գատըգիւղի շոգենալին մէջ կանանց կողմը կին մը հետեւեալը կը պատմէր քովի նստողին:

«Մեզայ քուրուկ, Պէյօղլու կը նըստիմ. Ղալաթիա ինձայ նէ ըսի որ, քէօրբիւն փարան չիտամ տէ պարէ քալելով պաշխա՝ ճամբով մը Ստամպուլ անիմ. . . .»

ՊԵՏՐԻ

1880 մտրտ 8
Գ. . . գիւղ

ԿԱՆԱՑ ԺՈՂՈՎ

(Գաւառի խօսք)

Որիչ մը. — Զիպա հանքմ: սա բէն. ճիրէին տակը նստող կէնճը կը ճաշնաս ո՞վ է:

— Չէ. չեմ ճաշնար ամա, մէնքալէ մարդու կնիկ ըլլալու է:

— Մէնքալէն ալ խօսք է, շարխան էն քիչը իրեք օսկինոց բան է:

— Իրեք օսկիի չեն իտար:

— Յիստանն ալ խըյախ բան է, ինծի կուգայ քի վարէն էկած ըլլալու է:

— Ես վրայի մանթօն, տողրուսու աչկըս մնաց:

— Աստուած պարի վայում տայ, ամա ինծի կուգայ քի էս աս կէնճը պիտի ճաշնամ, աչկա կը խածնէ կորքա հա՛, միտքս էկաւ, էս ասիկա անցածները խարակէօմրիկիւն ժամը տեսայ, տալս կը ճաշնայ կոր, Պալատցի է, հասկցայ:

— Էրիկը պազիրկեան է, չէ նէ մի սարաֆ:

— Գա չէ, նէ պազիրկեան է նէ սարաֆ, չարչըն եաղմաճի է, իշտէ սանկ էսնաֆ մը:

Հիմակ խելքիս կուգայ, աս ի՞նչ սիւս է, հէմէն մենք էնք քի սասանկ սիւսեր չենք ըներ:

— Ըրէ. ծառքէդ վ՞ով է պոներ:

— Ասանկ է ամա, ամեն մարդ իր վայումը պիտի ընէ, չէ նէ վրան կը խնտան, էլչիի մատամայ է, չէ նէ մի Սլեօն սարաֆին կնիկն է կըսեն:

— Անոնք պիտի հիմա սասանկ ֆանթաղիէ սիւսեր չեն ըներ կոր. ատիկ պատու բաներ կը հաղնին. աճապա չունի՞ն, վախտնին ծառք չի տար. բէք ալ աղէկ ծառք կուտայ ամա, սիւսի տայիրջրաներ ընելը ամօթ կը սեպեչ կոր, մարինները բստս նէ ատիկ կէչինմէ մը չունին, ամա սիւսերնին տեղ մը նիկայ:

— Հէլպէթ շատերն ալ պարտկով խարճով կընեն կոր:

— Աստուած կարողութիւն տայ դէմ գնողներուն:

Որիչ մը. — Լուսեա հանքմ. ան չէ ամա մտք ինչու հոս էկանք, ըսելիք մը ունին նէ թող ըսեն տէ վախտին էլլանք տեղերնիս երթանք:

—Մեզի տալէթ ընող Պայծառ հանրմը վճար է. անոր ըսենք:

Այս միջոցիս ամէն կողմէ անհամբերութեան նշաններ կ'երեւին, շշուկներ կը բարձրանան և քիչ կը մնայ որ բաղնիքին թասը կորսուի, բայց մէյ մ'ալ ահա Պայծառ հանրմը սրահէն ներս կը մտնէ և ամենայն քաղաքավարութեամբ բարեւելէ յետոյ կսկսի խօսիլ սուպէս՝

Ներքեցէք տիկնայք և օրիորդ որ ձեզի բացատրեմ այսօր զձեզ հոս հրաւիրելնուս պատճառը . . .

Տիկին Նունուֆար.—Քուզում օրթ տի, քիչ մը պաց խօսէ քի հասկընանք, զէրէ մենք կրապարճա չիյտենք:

Արմիկ հանրմ.—Մեզի ինչո՞ւ բամբասես, մենք ի՞նչ ըրինք:

Պայծառ հանրմ.—Բամբասեմ չըսի, բացատրեմ ըսի, որ հասկցունեմ ըսել է:

Մաղթիկ հանրմ.—Մըրաւէրը ի՞նչ է, մո՞ւր տալ է:

Մաղթիկ հանրմ.—Ատ ի՞նչ է, մուր տալո՞ւ համար մեզի հոս տալէթ ըրին, չօգ շէյ:

Թէպէք տուտու.—Մուրն ալ իրենց կուրն ալ իրենց, հէլէ սվոր նայեցէք, հասկցաք ա իշտէ, հայտէ էրթանք:

Պայծառ հանրմ.—Ձֆ կընէք, իմ ըսածս սխալ հասկցեր էք . . .

Անթառան տուտու.—Սվոր նայեցէք, մէյ մըն ալ էլեր մեզի սուտ կը հանէ կոր, սանքի խուլ էինք տէ չի լսեցինք, կիտի սէնի կիտի . . .

Պայծառ հանրմ.—Հրաւիրել ըսի որ տալէթ ընել ըսել է:

Թէպէք տուտու.—Հա չէօյլէ, սանկ քիչ մը կամաց կամաց եօլի էկուր:

Իպրաքսէ հանրմ.—Մեզի պան մը ըսեմ. աս ասանկ չըլար, պաղնիքին թասը խայիպ կըլլայ կոր, թող տուէք քի ի՞նչ պիտի ըսէ նէ ըսէ լմնցունէ՞, գիշերը հոս չպիտի կենանք:

Մէկը կըսէ՝ հախ ունի Իպրաքսէ հանրմը, իմ տեղս հեռու է, ետքը ուշ կը մնամ:

Ուրիշ մը ախճիկս տունը մինակ է,

Ուրիշ մը՝ չօճօխս տուպոցէն դայ նէ տոււր կը մնայ:

Ուրիշ մը՝ աղաս կուզէ քի սահաթը տասնըմէկէն ետիը տուրսը չի մընամ:

Ուրիշ մը՝ տղաս կայ ինծի տունը չի կտնայ նէ արուներ կը հոտեցունէ:

Ուրիշ մը՝ ես տահա պիտի էրթամ տէ տօլմա պիտի տնեմ:

Ուրիշ մը՝ էյ ճանըմ թող տուէք քի Պայծառ հանրմը խօսի, նայինք ի՞նչ պիտի ըսէ:

Պայծառ հանրմ.—Իմ խօսելիք սանանկ բան մըն է որ ամենուդ համար ալ խերով է . . .

Շամսնդաղ տուտու.—Աճապա իմ Սուրբիկիս մէ՞կը կտար:

Բուլանթի տուտու.— Աճապա իմ Ակորճանիս տե՞ղ մը կտար:

Շողակաթ տուտու.— Ալլահայէմ քի իմ Պետօիս փարալը ախճիկ մը կտար:

Բէմպէ հանրմ.—Աճապա քրօջս համար ալ բան մը կայ:

Պայծառ հանրմ.—Կաղաչեմ որ մըտիկ ընէք, խօսքիս վախճանը առէք:

Կայտէֆա տուտու.—Հա ամա, իշտէ կիտես, սիրտերնիս թուուալուն կուզենք որ սահաթ մը առաջ իմանանք:

Պայծառ հանրմ.—Թէ որ խօսքս չը կտրէք նէ, ես չարուխ կը լմնցունեմ:

Ամենքը մէկանց.—Բէգ աղէկ, բէգ աղէկ:

Պայծառ հանրմ.—Ամենքդ ալ զակի տէր էք ու կուզէք որ սահաթ մը առաջ խայրըլըսիովը օտք կըլիս ընէք:

Ամենքը.—Հապա, հապա:

Պայծառ հանրմ.—Լաքին գիտէք քի դրախօմային սէպէպովը ախճիկ զակի տէրերը մենծ մտմտուքի մէջ են. չիւնքիւ հիմա դրախօմասըզ չեն առներ կոր. ասոր համար դրախօմա չունեցող շատ մը էվճիմէն, ընող ըլլող ու լայրխըր ախճիկներ չեն կրնար կոր կարգուիլ. իշտէ աս բանին վրայ մտմտալու ու աս բանին խարար մը տալու համար ծեղի հոս բերինք,

(Շարունակելի)

Մէջ վաճառարան և քարթարան լածպայէ և այլ նիւթոց : Ալլահա համամ Բէն 16 Դեր) է Գիւլնիլի

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ Յ. ՉԱԽՄՁԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգո հասարակութեան թէ իւր վաճառայ տան մէջ կը շինուին և կը նորոգուին. կտորած, վնասուած, աւրուած եւրուպական ամէն տեսակ գործիք. ինչպէս կազի կամ իւղի լամպաներ, աշտանակներ: անկողնարանք. չիրինկաներ, տուշեր, սամավարներ և յախճապակեայ կտորած որ և է նիւթեր, ըստ ամենայնի մաքուր, վայելուչ և նորէն աւելի հաստատուն:

Նաեւ, սոյն վաճառատան մէջ կը գտնուին, եւրոպական ընտիր լամպաներ, աշտանակներ ընտիր Թապակի խողովակներ որոց համար հասարակութիւնը միշտ կը գանգատի թէ չկան աստ: կլօպներ. և ամէն տեսակ պարոյկներ, մէկ խօսքով, լանպայի վերաբերեալ ամեն բան, ինչպէս նաեւ պանեօ և չինկոյէ լուացարաններ և տուշ ընելու համար պէտք եղած ամէն կերպ գործիք:

Գիները յոյժ չափաւոր են. դի մեր գործարանի սկզբունքն է ճՆԴՈՒԹԻԻՆ ԵՒ ՀԻՎ ՏԱՐԿՈՒԹԻԻՆ:

***—Փորձով գիտեմք և ընաւ տարակոյս չունիմք թէ յիշեալ ճարտարարուեստ ազգայնոյն գործերէն մեծապէս գոհ պիտի ըլլան մեր ազգայինք, և այլ եւս իւրեանց այս կարգի պէտքերն հոգալու համար սիրայօժար պիտի գիմեն նոյն վաճառատուն և գործարանը, փոխանակ այլ տեղեր յաճախելու, մինչ սա վստահութեան ամէն պայման կ'ընծայէ իւր յաճախորդաց:

Օ՛ն ուրեմն, գիմեցէք անդ և փորձեցէք:

ՀԱՅ ԹԵԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՊԱՀՃԷ ԳՍՓՈՒ

ՃԵԼԱԼ ՊԵՑ ԽԱՆԻՆ ՏԱԿԸ

Յիշեալ վաճառատան մէջ կը գտնուին ամեն տեսակ խիստ ընտիր և թարմ թէյեր

որ յատկապէս բերել տրուած են Ձրնաստանէ, ձափայէ, և Հլանասայէ :

Այս փոճառտուուն որ հաստատեալ է մի քանի տարիէ հետէ, իւր ուղղութեամբ, պատուաւորութեամբ և անխարդախ գործառնութեամբ մեծ անուն և համբաւ կը վայելէ աստ և թէ ի գաւառու և ուրի խիստ բազում յաճախորդներ :

Վաճառուունը կը լինին մեծաքանակ և թէ փոքրաքանակ, գիները չափաւոր են :

ՅՈՎԷԼ Կ. ԿԱՐԻՆՆԱՆ

Քեանք մէ հարազատ քեզիստան

Մէջքիւր տէրօ Յընտրելուտա քէրէս-թէճի սողողը տա տէրիզ սահիլնտէ 18 նիւմէրօ իլէ միւրազգամ օլուպ : պու տէֆա մտտէն սօպալար իլէ գուղինօլար իլիւն տիկէր քէօմիւրլէրտէն տաւա էհվէն վէ յաեէտ տաե նազլու գօզ քէօմիւրիւ կէթիւրլմիլ տիր. վէ ալա ճինտտէն մանկալ քէօմիւրիւ. վէ սօպա վէ չամաչրր իլիւն տախի մ. ի սուս քէսիւմիլ ալէս օտուն Ֆիրուխի իտիւմէքաէ տիր. վէ յէզալէք Շիւլի վէ նիւանթաչը վէ Ֆէրիքէօլիւ էհալի սինէ պիւր սուհուլէթ օլմազ ի ին. Բանկալիլիտէ Պիւսիւքաէրէ ճատաւալն աէ համմամ գարչլուրտա 48 նիւմէրօ իլէ միւրազգամ պիւր չիւպէէ քիւչատ իւրիւմիլ օլտուզու բազպէթլու էհալիէէ իլան օլունուր :

ՓՕՐԹՈՒՆԱ

ԱՆՕՆԻՄ ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ

ԳՈՒՄԲԱՆԵԱՍՏ

1868 րէ Պէրլէնրէ Բէէտիս օլունմաւլ րըր.

ՍէրՄԱԵՆ 1,875,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 1,337,500

ՏԻՒՍԷԼՏՈՐՓԵՐ

ՏԷՆԻՁ, ՆԷՂՐ ՎԷ ԳՍՐԱ

ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՏ

1745 րէ Տէսէլտօրֆրո Բէէտիս օլունմաւլ րըր.

ՍէրՄԱԵՆ 3,750,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 3,099,367. 15 ՅՐ.

Տէրատտէթ բիւզասընտա պիւրլէշմիլ օան իշպու սիկուրթա գուժբանեալարը. քէֆալէթի միւթէգապիլէ իլէ հէր նէվի էմթաա վէ աղչէ կրուօլարընը, տէրիլ, նէհր վէ դարա նազլիեալթը թէհլիքէլէրինէ գարչը զայէթլէ Փաեիտէպալա շէրաեիթ. իլէ սիկուրթա իտէրլէր :

ՀԱՆՁԷԱԹԻՇԷ

ԵՄՆԱՂՆԱՍ ԳՍՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՏ

1874 րէ Համպուրկո Բէէտիս օլունմաւլ րըր.

ՍէրՄԱԵՆ 3,750,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 600,000

Իշպու սիկուրթա գուժբանեալար, հէր նէվի էմլաք վէ էշեաեթ, անպար վէ մաղա. զա աէրուէնլէրինտէքի էմթաաեթ, էն գրիտաէ Փաեիտէպալա շարթլար իլէ սիկուրթա իտէր : Թալիլիլի մալիւմոթ ալմազ իսթէէէնլէր, պալէաաէ զիքր օլունան իւշ գուժ. բաեալարըն ումումի մասլահաթ կիւզարը պալու. նան իսթանպօլտա Պանչէ-Գարու. սունտա Բաիմ բաչա խօսընտա նիւմէրօ 13 վէ 14 տէ ՏԻՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԷՓԷՆ-տիեէ միւրաճաաթ իթմէկէ տալէթ օլունուր :

եթէ դուք ձեր եզրօր քով մնայիք, ո՛րքան քաղցր պիտի ըլլար ինձ յաճախ գալ տեսնել ձեզ, միատեղ երաժշտութիւն ընել և ըսել ձեզ ինչ որ կը մտածէի այն ատեն :

— Միթէ հիմակ ալ նոյնը չէ՞ք մտածեր :

— Ինչ օգուտ ունի սիրել աղջիկ մը որուն ամեն օր կը սորվեցունեն թէ մենք բռնաւոր. ներ, ստրուկներ կամ տխմարներ ենք, որոնք մի և նոյն բաներն են. վասն զի մարդ տխմար ըլլալու է որպէս զի ստրուկ ըլլալու յօժարի :

— Բայց, պարոն, ինձ ատանկ բան սորվեցուցած չունին :

— Կարելի է, օրիորդ : Տիկին Բանդալուն ինքզինք ամեն բան ընելու, ամեն պաշտօն կատարելու կարող կը կարծէ : Մինչեւ իսկ եթէ բնութիւնն այս ամեն կարողութիւններով օժտած ըլլար զինք, պէ՞տք էր որ էրկանը հետ այսպէս վարուէր, զայն միշտ նուաստացնելու ջանար : Ինչ և իցէ, ինչպէս ժամանակ կանցունէք դգեակին մէջ :

— Ձի հեծնալով, զինաշարժութիւն և մարմնամարզութիւն ընելով, Այս տիկնայք լրագիր մըն ալ պիտի հրատարակեն, առաջին թիւը տպուելու վրայ է արդէն :

— Իւ դուք, օրիորդ, դուք ալ կ'աշխատակցի՞ք լրագրին խմբագրութեան :

— Լիրբին մէկն է եղեր, բաւ Սէզաուին, ծանր ու նախատական խօսքեր ըրաւ ինձ. վասն զի չուզեցի աչօք քննել իր դամին բացած վէրքը :

Այս յայտնութիւն հեգնական ծիծաղներով ընդունուեցաւ :

ԺԴ.

Հ Ա Ն Գ Ի Պ Ո Ւ Մ

Երբոր Սէզաուին աղատ վայրկեան մը զրտնէր, կ'երթար կը տեսնէր իր պզտիկ ժորժէ. դըն, և կը համբուրէր զայն : Քանիներ անգամ մտածեց իր հետ դղեակ բերել զայն. բայց մանուկը դեռ տասն և հինգ ամսու էր, և շատ հանգիստ իր կաթնտուին քով, որ մեծ խնամ կը տանէր նմա :

Էլվինա գրեթէ միշտ կ'ընկերանար Սէզաուինի, երբոր այս վերջինը տեսնելու կ'երթար պզտիկ ժորժէդը : Բայց Էլվինա չունէր առջի զուարթութիւնն, աշխուժութիւնն ու ծիծաղը. դղեակին կեանքը միօրինակ կ'երեւէր իրեն : չէր ուզեր աշխատակցիլ հրատարակու.

Ֆ Ռ Ա Ն Գ Ֆ Օ Ր Թ ՈՒ Ա Ձ

Տ Ե Ն Ի Ձ Ս Ի Կ ՈՒ Ի Ր Թ Ս Գ ՈՒ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Սէ մանէ Փրանգ 0,250,000 հիմնաթ աղչեսի Փրանգ 1,270,000

Մէզքիւր գումարանիա տէնիզ գաղալարընա գարչը վարօրյարտա վէ կէ միլէրոտէ երւքլէնիլէն մալլերի, վէ քէզալիք բոսթա խաարէլէրիկէ թէսլիմ օլունան միւճէվէրաթ վէ եալստ պանգնօթ էվրագը դաեթթ էհվէնիեթթ վէ սուհուլէթլէ սիկուրթա իաեր :

Պաւ ճիհէթլէ մէպալիդի քիւլիեթերի սիկուրթա իտէպիլմէք իլին իշպու գումարանիա էվրօրատա 13 թանէ պիւեիւք սիկուրթա գումարանիալարընա պիլլէնիլ տիր : Պունըլարըն թէքմիլ սերմանէ վէ իհիթիեթ աղչեսի 100,000,000 Փրանգը կէչէր :

էքմիլ թիւրքիա աճէնթէսի

Հ Ա Մ Պ ՈՒ Ի Կ Մ Ի Ի Ն Ի Խ Պ Ի Լ Է Շ Մ Ի Շ

Ե Ա Ն Կ Ը Ն Ա Գ Ա Ր Շ Ը Ս Ի Կ ՈՒ Ի Ր Թ Ս Գ ՈՒ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Սերմանէ	Փրանգ 8,000,000
Իհիթիեթ աղչեսի 1888 Յունիսէ գատար	Փրանգ 4,817,262
Սէնէվի իրատ 1888 Յունիսէ գատար	Փրանգ 10,069,700

Մէզքիւր գումարանեալար տէրօղիթօլար վէ խանէլէր վէ անլէր իլինաէ պուլունան մալլեր վէ մօպիլեալարը դաեթթ էհվէնիեթթ վէ սուհուլէթլէ, թէէմիլնաթը գալիեթթ թաճթընտա օլարագ սիկուրթա իտէրլէր :

Իսթանպօլ աճէնթէսի

Իսթանպօլ, Պահճէ-գաբու, Եօրկիատիս խան Գ.Ռ.Ն.Ի.կ Ա.Ս.Տ.ՈՒ.Ա.Ծ.Ա.Տ.ՈՒ.Ի

Մալիւմաթ. — Եիրքէթլէրիմիլին Տէրիաատէթ պանքերլէրի պու ունան Ներսէսեան Բէտէր վէ Մախտուուու էֆէնիլէր՝ հիսապը կէօրիւլիւլ, վէ միւտիրիեթթի ումուսիեթթ թարաֆընտան թաստիգ օլունմուշ հէր կիւնա զարար ու զիեանը թաղմիլնէ թէմամիլլէ թալիմաթ ալաղ իլլէմիլլէր տիր :

Լ Ս Ո Ւ Կ Ն Ե Զ

Ը Ն Կ Ի Թ Շ Ը Ր Գ Ե Զ Ի Հ Ի Մ Ե Ա Լ 1887

Կեդրոնաանիլի 18, Աէն.Մաւք փողոց, Բ րիդ
Պրամագլուխ, Կ, 000,000 Ղճորեալ Ֆլաններն Ի 30,000,000

Աեթի բնոց աղճակ տեղեկութեանց համար գիտելի գրասենտալի
Կալիթեան • Գալաթիլա • Մահմուտիլլէ փողոց • թիւ 2, Ճէրլէմէ, Խան, Գաման
Տօղի Պանգալիլն րիլապ :

Ընդհանուր գործակալը լուսնագրակ թուրքիոց և ճահտատանի
ՍԻՄՈՆ ԿԱՅԻՄԻԱՆԻ ԵՒ ԿՈՒԿ

Թեան . ներկայ չէր գտնուեր յաճախ անկախուհեաց համաժողովներուն , և եթէ սօքա վիճարանութիւնները երկարէին իրենց կանոնագրութեան վրայ , էլ վիճա նշան չը կընէր Ակլաէին և միատեղ պատելու կերթալին դըղեկին շրջակայքը :

Գեաւհաստի աղջիկը չէր գիտեր թէ գիւղին մէջ մէկը կար , որ միշտ զինք կը լրտեսէր , որ իրեն հետ խօսելու իր ձեռք կը տօչուրէր . բայց չէր կրնար իր վաճառքն իրականացնել . վասն զի եղբայրն արգիլած էր զայս իրեն : Սակայն և այնպէս , անգամ մը Կիւսդալ ըսաւ ինքնին .

— Անհնարին բան է այս . իրեն հետ չի խօսիլ . . . ո՛չ , ո՛չ , եթէ իրեն հետ խօսիմ , պիտի յիշեմ միշտ այն պատուէրն , զոր փրէտէրիք տուաւ ինձ . այսինքն այնպէս պիտի ձեւանամ իրը թէ գաղբօմ եմ զինքը սիրելի :

Եւ որ մը հանդիպեցաւ էլ վիճալի ու սպառուհայն : Ատոյ՛ֆի քոյրն ճիշ մը արձակեց ուրուն մէջ ստակման շեշտ չիկար : Ընդհակառակն ժպտեցաւ Կիւսդալին ու ըսաւ .

— Ա՛հ , պարոն Կիւսդալ , դուք հո՛ս : Ի՛նչ դիպուած : Մեզ տեսնելու կուգաք արդեօք :

— Ո՛չ , օրիորդ , պատասխանեց Կիւսդալ ցուրտ և զգոյշ երեւոյթ մը առնելով , պիտի

զգուշանամ տիկին Բանդալունի տունն երթալէ , որ իր երկը ձգեց և շրջապատեցաւ այնպիսի տիկիններէ որոնք իրեն ընթացքին հետեւեցան , Գիտեմ թէ երկը մարդիկ շատ գէշ են յաչս այդ տիկնանց , թէ ձեր հարսը այնքան մեծ սէր չունէր եղբօրս նկատմամբ , և թէ զիս չէր քաշեր . վասն զի ամեն անգամ որ ձեզ հետ խօսելու կը սկսէի , կը փութար իր կոյն արգելք մը յարուցանելու : Կը տեսնէք որ դղեակի գալը մտքէս անգամ չէր կրնար անցունել :

— Ուրեմն ինչ ընելու եկած էք ի Պաւլիսի :

— Եղբայրս այս մօտերս մէկուն տունը հիւր եկաւ և ես ալ ընկերացայ իրեն :

— Ա՛հ , ըսել է թէ եղբայրնիդ այ ձեզ հետ է :

— Այո՛ , օրիորդ :

— Սրդեօք շատ անգամ Ատոյ՛ֆը կը տեսնէ՞ :

— Այո՛ , օրիորդ :

— Եւ եղբայրս աւելի երջանիկ է , կնոջմէն բաժնուելէն ի վեր :

— Երջանիկ ըլլալը չեմ գիտեր . բայց սպահով եմ թէ աւելի հանգիստ է : Ա՛հ , օրիորդ ,